ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներ

Ամսական տեսություն
(Հուլիս 2018)

ԵՐԵՎԱՆ 2018

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ֆինանսական շուկաների զարգացումների վերլուծության նպատակը այս շուկաներում տեղի ունեցող գործընթացները տեսանելի դաշտում պահելն ու դրանց ազդեցությունը ՀՀ եվրոպարտատոմսերի, ՀՀ ներքին ֆինանսական շուկայի և ընդհանրապես՝ երկրի մակրոտնտեսական վիճակի վրա հասկանալն է, ինչը, նկատի ունենալով ազդեցությունների լագային(ժամանակային առումով խզված) բնույթը, կարևոր է մեր տնտեսության համար ապագա զարգացումների կանխատեսման տեսանկյունից: Մյուս կողմից՝ համաշխարհային կապիտալի շուկաներում ներդրողներ են նաև ՀՀ սուբյեկտները(ԿԲ, կենսաթոշակային ֆոնդեր, այլ ինստիտուտներ և անհատներ), ինչը ևս կարևոր է դարձնում այստեղ ընթացող զարգացումների վերլուծությունը: Այս՝ ամսական պարբերականությամբ հրապարակվող տեսությունը ամփոփում է ՀՀ եվրոպարտատոմսերի, համաշխարհային ապրանքային(մետաղներ, էներգակիրներ, պարենային ապրանքներ), արժութային(դոլարի ինդեքս, եվրո, ՌԴ ռուբլի) և կապիտալի(զարգացող և զարգացած երկրների ֆոնդային ինդեքսներ և պետական պարտատոմսերի եկամտաբերություններ) շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերլուծությունը: Ամսական տեսությունը հիմնվում է Investing.com հարթակի հրապարակած վիճակագրության վրա, իսկ վերլուծությունների հիմքում Reuters գործակալության տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներն են և սեփական դիտարկումները: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեսական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի

վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնայիյն շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

© ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագիր

Բովանդակություն

Ամփոփ տեսություն 5
1.Պետական պարտատոմսերի շուկա 7
2.Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ 18
3.Ռեպո գործարքներ 35
4.Սվոփ գործարքներ 36
5.Միջբանկային վարկային շուկա 36

Ամփոփ տեսություն

Ամփոփելով 2018թ. հուլիս ամսին ՀՀ արժեթղթերի և միջբանկային վարկային շուկաներում կնքված գործարքները կարող են նշել, որ.

1. Պետական պարտատոմսերի շուկայում հուլիս ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 27,760 մլրդ դրամի 8 տեղաբաշխում: Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1,62 անգամ գերազանցել է պահանջարկին: Իրականացված կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդների դեպքում նախորդ ժամանակահատվածներում իրականացված տեղաբաշխումների նկատմամբ հիմնականում տոկոսադրույքի աճ են ունեցել: Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի երկու հետգնում է իրականացրել: Հետգնվել են 19 թվականին մարվող միջնաժամկետ պարտատոմսեր 1 մլդր և 2032 թվականին մարվող երկարաժամկետ պարտատոմսեր՝ 2 մլրդ ծավալներով:

2. Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ հուլիս ամսին աճել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 531,926 մլրդ դրամ (աճել է 21 մլրդով), իսկ կարճաժամկետինը աճել է՝ կազմելով 23,661 մլրդ (աճել է 0,395 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը հուլիս ամսվա վերջին կազմել է 6,1401 % (մայիսի վերջին՝ 6.1269%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 12.7661%՝ նախորդ ամսվա վերջի 12.8077%-ի փոխարեն:

3. Հուլիս ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 38,941 մլրդ դրամի 85 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 10 տոկոսը՝ 3,890 մլրդ դրամ, ինչը 8 գործարքի արդյունք է: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 35,052 մլրդ դրամ:

4. Հուլիս ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 4,190 մլրդ դրամի 56 գործարք: Գործարքները հուլիս ամսվա ընթացքում աճել են մոտ երկու անգամ: Գործարքների 46,9 տոկոսը կնքվել է 36 թվականին մարվող 20 տարեկաներկարաժամկետ պարտատոմսերով, 37,4 տոկոսը կնքվել են 47 թվականին մարվող 30 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: 9,2 և 4,1 տոկոսը համապատասխանաբար կնքվել են է 23թվականին մարվող երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերով: Նախորդ ամսվա համեմատ բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են:

5. Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 234,902 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 30,2 % -ը կազմել են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմերով գործարքները: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 1,436 մլն դոլար:

Դոլարային գործարքների դեպքում "Ամերիաբանկ" ՓԲԸ–ի AMRBB4 բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 38,9 %-ը:

6. Հուլիս ամսին բաժնետոմսերի հարթակում կնքվել է ընդամենը 2 գործարք «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի առարկա են հանդիսացել 1203 բաժնետոմսեր, որոնց միջին գինը մեկ բաժնետոմսի համար կազմել է 1072,08 դրամ: Ընդհանուր գործարքի ծավալը 1,290 մլն դրամ է կազմել:

7. Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը հուլիս ամսին կազմել է **383,3** մլրդ դրամ: Գործարքների մոտ **40**%-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների **13**%-ը: Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 154,96 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են հիմնականում մինչև 7 օր ժամկետայնությամբ: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է **6,19**%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.50**%** և **2.00** %:

8. Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Դրամային բորսայական ռեպոյի ծավալը կազմել է 157.7 մլն դրամ, կնքված գործարքի եկամտաբերությունը 6.5% է: Դոլարային ռեպոների ծավալը կազմել է 1,404 մլն դոլար: Գործարքները կնքվել են 14-84 օր ժամկետայնությամբ և 2.68 % միջին կշռված եկամտաբերությամբ:

9. Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են **16.369** մլն դոլարի կամ **7,892 մլրդ** դրամի 39 սվոփ գործարք, ընդ որում միջբանկային գործարքներ կնքվել են ինչպես միջբանկային, այնպես էլ միջբանկային շուկայից դուրս: Միջբանկային շուկայում կնքված գործարքները կազմել են բոլոր սվոփ գործարքների 13%-ը, ինչը ընդամենը մեկ գործարքի արդյունք է: Միջբանկային շուկայում կնքված գործարքների միջին եկամտաբերությունը կազմել է 6.00**%:** Միջբանկային շուկայից դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 3,53%: Առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 9.25% և 3%:

10. Միջբանկային վարկային շուկայում հուլիս ամսին կնքվել են 36 վարկայն գործարքներ 3 արժույթներով՝ դրամ, դոլար, եվրո: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ **34,900** մլրդ դրամ: Գործարքների եկամտաբերությունը կազմել է **6,08%**: ԱՄՆ դոլարով ընդհանուր առմամբ կնքվել են 14,950 մլն դոլարի միջբանկային վարկային 9 գործարք, որոնց միջին տոկոսադրույքներըմինչև 7 օր ժամկետայնության դեպքում կազմել է **2,39%**, 1-3 ամիս ժամկետայնության դեպքում՝ 2,14 %**:** Միջբանկային վարկային շուկայում կնքվել է եվրոյով 7 վարկային գործարք, որոնց ընդհանուր ծավալը կազմել է 13,2 մլն եվրո: Գործարքների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է **1.34%:**

1.Պետական պարտատոմսերի շուկա

Պետական պարտատոմսերի առաջնային շուկա

Պետական պարտատոմսերի շուկայում հուլիս ամսին Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է 27,760 մլրդ դրամի 8 տեղաբաշխում:

Աղյուսակ 1.

2018 թ. Հուլիս ամսին պետական պարտատոմսերի տեղաբաշխումները և եկամտաբերությունը

	Թողարկման համար	Մարման ամսաթիվ	Աճուրդի ամսաթիվ	Բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (դրամ)	Սահմանային եկամտաբերություն	Միջին կշռված եկամտաբերությունը
1	AMGT52017192	01.07.2019	02.07.2018	1,000,000,000	6.2937	6.2681
2	AMGT52017192	01.07.2019	03.07.2018	100,000,000	6.2681	6.2681
3	AMGT52084192	08.04.2019	09.07.2018	1,000,000,000	6.2347	6.1862
4	AMGT52084192	08.04.2019	10.07.2018	120,000,000	6.1862	6.1862
5	AMGB30163472	16.03.2047	17.07.2018	20,000,000,000	11.3802	11.3743
6	AMGB30163472	16.03.2047	18.07.2018	4,000,000,000	11.3743	11.3743
7	AMGT52141190	14.01.2019	23.07.2018	1,000,000,000	6.4800	6.1780
8	AMGT52141190	14.01.2019	24.07.2018	40,000,000	6.1780	6.1780

Ընդհանուր առմամբ պարտատոմսերի պահանջարկը մոտ 1,62 անգամ գերազանցել է պահանջարկին: Իրականացված կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր աճուրդների դեպքում նախորդ ժամանակահատվածներում իրականացված տեղաբաշխումների նկատմամբ հիմնականում տոկոսադրույքի աճ են ունեցել: 52 շաբաթական պարտատոմսի երեք տեղաբաշխում է տեղի ունեցել: Պահանջարկը առաջին աճուրդի ժամանակ գերազանցել է առաջարկը 2,3 անգամ, իսկ երկրորդ և երրորդ տեղաբաշխումների ժամանակ համապատասխանաբար՝ 1.6 և 1,1 անգամ: Առաջին աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6,2937% և 6,2681%: Միջին եկամտաբերությունը նախորդ ամսվա նույն ժամկետայնության աճուրդից աճել է 0,04 տոկոսային կետով: Կարճաժամկետ պարտատոմսերի երկրորդ աճուրդի սահմանային և միջին եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝ 6,2347% և 6,1869%: Կարճաժամկետ պարտատոմսերի երրորդ տեղաբաշխման աճուրդի միջին և սահմանային եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար՝

6,4800% և 6,1780%: 2047թ. մարվող երկարաժամկետ 30 տարեկան պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի պահանջարկը գերազանցել է առաջարկը 1,75 անգամ: Նույն պարտատոմսի նախորդ տեղաբաշխման աճուրդի համեմատ միջին կշռված եկամտաբերությունը նվազել է 0,91 տոկոսային կետով կազմելով 11,3743%: Աճուրդի սահմանային եկամտաբերությունը կազմել է 11,3802 %:

Պետական պարտատոմսերի աճուրդներին պահանջարկի մեծ ծավալը պայմանավորված է եղել մի կողմից շուկայում եկամտաբերության նվազման միտումներով՝ կապված ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության աստիճանական մեղմացման և տոկոսադրույքների նվազեցման հետ, իսկ մյուս կողմից փետրվար ամսին պետական պարատտոմսերի և դրանց արժեկտրոնների մեծ ծավալի մարումներով: Բացի այդ երկարաժամկետ պարտատոմսերի աճուրդների մեծ մասը գնվում է շուկայի մի քանի խոշոր ներդրողների կողմից, ինչն էլ թույլ չի տալիս շուկայում եղած ընդհանուր պահանջարկի բավարարում: Սակայն երկրորդային շուկայում պարտատոմսերի եկամտաբերությունները երկարաժամկետ գործիքների դեպքում հասել են իրենց պատմական նվազագույն մակարդակին, և շուկայի մասնակիցների մոտ տոկոսադրույքների հետագա նվազման սպասումները գնալով պակասում են, ինչի արդյունքում կարծում ենք շուկայում տոկոսադրույքների առկա մակարդակը կպահպանվի: Որպես եկամտաբերության աճի գործոն կարող է ազդել միայն ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացումը, ՀՀ միջազգային վարկանիշի նվազեցումը, տարածաշրջանում տնտեսական, քաղաքական և ռազմական լարվածությունը:

Հուլիս ամսին Ֆինանսների նախարարությունը պետական պարտատոմսերի երկու հետգնում է իրականացրել: Հետգնվել են 19 թվականին մարվող միջնաժամկետ պարտատոմսեր 1 մլդր և 2032 թվականին մարվող երկարաժամկետ պարտատոմսեր՝ 2 մլրդ ծավալներով: Հետգնման առաջարկը 2019 թվականին մարվող պարտատոմսերի դեպքում գերազանցել է պահանջարկը 2,15 անգամ, իսկ 2032թվականին մարվող պարտատոմսերի դեպքում՝ 1,71 անգամ: 2019թ մարվող պարտատոմսերի դեպքում հետգնման աճուրդի միջին և սահմանային եկամտաբերությունները կազմել են՝ 5,6050% և 5,6549%: Նախորդ ամիս իրականացված նույն պարտատոմսերի հետգնման եկամտաբերության համեմատ միջին կշռված եկամտաբերությունը նվազել է 0,0035 տոկոսային կետով: 2032թ մարվող պարտատոմսերի դեպքում աճուրդի միջին և սահմանային եկամտաբերությունները կազմել են՝ 10,2300% և 10,2330%: Նախորդ հետգնման աճուրդից եկամտաբերությունը նվազել է 0,0781 տոկոսային կետով:

Ընդհանուր առմամբ շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալները նախորդ ամսվա վերջի դրությամբ հուլիս ամսին աճել են՝ միջնաժամկետի և երկարաժամկետի ծավալները կազմել են 531,926 մլրդ դրամ (աճել է 21 մլրդով), իսկ կարճաժամկետինը աճել է՝ կազմելով 23,661 մլրդ (աճել է 0,395 մլրդ-ով): Շրջանառության մեջ եղած կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը հուլիս

ամսվա վերջին կազմել է 6,1401 % (մայիսի վերջին՝ 6.1269%): Միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը շրջանառության մեջ կազմել է 12.7661%՝ նախորդ ամսվա վերջի 12.8077%-ի փոխարեն:

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկա

Արտաբորսայական

Հուլիս ամսին պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի արտաբորսայական հատվածում իրականացվել է 38,941 մլրդ դրամի 85 գործարք: Միջբանկային գործարքների ծավալները կազմել են կնքված գործարքների 10 տոկոսը՝ 3,890 մլրդ դրամ, ինչը 8 գործարքի արդյունք է: Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների միջև կնքված գործարքների ծավալը կազմել է 35,052 մլրդ դրամ: Կնքված գործարքների 77,6 տոկոսը կնքվել է 47 թվականին մարվող պետական 30 տարեկան պարտատոմսերով, 8,1 տոկոսը՝ 36 թվականին մարվող 20 տարեկան երկարաժամկետ, 3,7 տոկոսը՝ 36 ամսական 20 թվականին մարվող պետական պարտատոմսերով: Գործարքների կենտրոնացվածության նման պատկերի պատճառը այդ պարտատոմսերով տեղաբաշխման աճուրդներն էին, ինչպես նաև շուկայի մասնակիցների մոտ այդ ժամկետայնության պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը, դրանց եկամտաբերության շարունակական նվազեցումը վերջին ամիսների ընթացքում: Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերով գործարքների ծավալը կազմել է ընդհանույր գործարքների 1,2 տոկոսը:

Եվրոբոնդերով արտաբորսայական շուկայում կնքվել է ընդամենը 4 գործարք՝ 20,568 մլն դոլար ծավալով: Գործարքները կնքվել են միայն 2025թ մարվող եվրոբոնդերով և միջբանկային շուկայից դուրս: Գործարքների միջին կշռված եկամտաբերությունը այդ պարտատոմսի համար կազմել է 5,1222 տոկոս:

Աղյուսակ 2.

2018 թ. Հուլիս ամսին պետական պարտատոմսերի արտաբորսայական շուկայում կնքված գործարքները

Թողարկման համար	Գործարքների ծավալ	Միջին կշռված եկամտաբերություն
AMGB30163472	30,208,287,497	11.3632%
AMGB2029A366	3,160,064,076	10.8898%
AMGB20172327	632,724,415	10.1193%
AMGB1029A250	479,759,769	9.0843%
AMGB1029A235	63,345,441	8.4991%
AMGN60294235	1,320,866,376	8.0039%
AMGN60294227	737,182,696	8.0000%
AMGN60294219	324,876,942	7.5000%
AMGN60294201	93,223,648	6.9500%
AMGN36294202	1,449,874,769	6.9309%
AMGT52017192	470,988,303	6.2433%
Ընդամենը	38,941,193,932	

Պետական պարտատոմսերի բորսայական շուկա

Պետական պարտատոմսերի բորսայական շուկան բավականին ակտիվ է եղել:

Աղյուսակ 3

Հուլիս ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով կնքված գործարքները

ԾԱԾԿԱԳԻՐ	ՎԵՐՋԻՆ	ՄԻՋ	+/-	ԱՌԱՎ	ՆՎԱԶ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
AMGB1029A235	8.25	8.3361	-	8.4001	8.25	5	355,094,000	387,374,793
AMGB1029A250	8.8001	8.8001	-0.3754	8.8001	8.8001	1	2,000,000	2,281,500
AMGB1029A276	9.1999	9.2333	-0.0167	9.25	9.1999	4	90,000,000	96,307,554
AMGB2029A366	10.62	10.9047	-0.1817	11.0501	10.62	24	1,650,630,000	1,966,344,198
AMGB30163472	10.4501	10.8783	-0.5718	11.4499	10.4501	20	1,272,000,000	1,566,148,851
AMGN60294235	8.1501	8.2383	-0.0317	8.3001	8.1501	2	170,000,000	171,195,460
					Ընդամենը.	56	3,539,724,000	4,189,652,356

Հուլիս ամսվա ընթացքում բորսայական շուկայում ընդհանուր առմամբ կնքվել է պետական պարտատոմսերով 4,190 մլրդ դրամի 56 գործարք: Գործարքները հուլիս ամսվա ընթացքում աճել են մոտ երկու անգամ: Գործարքների 46,9 տոկոսը կնքվել է 36 թվականին մարվող 20 տարեկաներկարաժամկետ պարտատոմսերով, 37,4 տոկոսը կնքվել են 47 թվականին մարվող 30 տարեկան երկարաժամկետ պարտատոմսերով: 9,2 և 4,1 տոկոսը համապատասխանաբար կնքվել են է 23թվականին մարվող երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերով: 36 թվականին մարվող պարտատոմսի միջին եկամտաբերությունը կազմել է 10,9047%, 47 թվականին մարվող պարտատոմսի միջին եկամտաբերությունը՝ 11.4499%: 23 թվականին մարվող պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 8,3361 տոկոս: Նախորդ ամսվա համեմատ բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են:

Հասցեական գործարքների հարթակում 2,558 մլրդ դրամի գործարքներ են կնքվել:

Աղյուսակ 4

Հուլիս ամսվա ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիայում պետական պարտատոմսերով հասցեական գործարքները

ԾԱԾԿԱԳԻՐ	ՕՐ	ՄԻՋ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
AMGB1029A276	26.07.2018	9.1999	1	200,000,000	214,582,200
AMGB20172327	27.07.2018	10	1	520,000,000	664,244,880
AMGB20172327	26.07.2018	10	1	480,000,000	612,983,520
AMGB20172327	26.07.2018	10	1	100,000,000	127,704,900
AMGB2029A366	24.07.2018	10.6	1	117,270,000	143,329,622
AMGB30163472	12.07.2018	11.4499	1	250,000,000	292,771,000
AMGB30163472	02.07.2018	11.4499	1	250,000,000	291,886,500
AMGN60294227	23.07.2018	8	1	200,000,000	210,533,200
Ընդամենը			8	2,117,270,000	2,558,035,822

Հուլիս ամսին պետական արժեթղթերի շուկայում գործել են 7 գործակալ բանկեր: Գործակալները պարբերաբար ուղենիշային պարտատոմսերով գնանշումներ են կատարում նաև ֆոնդային բորսայում: Հունիս և Հուլիս ամսիների վերջին օրերի դրությամբ ֆոնդային բորսայում գնանշումների ծավալները նույնպես ընդհանուր առմամբ վկայում են շուկայի ակտիվության մասին:

Աղյուսակ 5.

Ֆոնդային բորսայում ուղենիշային պարտատոմսերի առաջարկի և պահանջարկի եկամտաբերությունները

ԾԱԾԿԱԳԻՐ	29.06.18		31.07.18		Փոփոխությունը	
	ՊՀՋ	ՊՀՔ	ՊՀՔ	ԱՌՋ	ՊՀՔ	ԱՌՋ
AMGB1029A276	9.6	9.25	9.4701	9.1501	-0.1299	-0.0999
AMGB2029A366	11.1501	11.0501	10.5	10.3001	-0.6501	-0.75
AMGB30163472	11.75	11.35	10.7699	10.5	-0.9801	-0.85
AMGN36294202	7.2401	6.96	7.2399	6.9501	-0.0002	-0.0099
AMGN60294219	7.6501	7.5	7.65	7.35	-0.0001	-0.15
AMGN60294227	8.2001	7.96	8.0465	7.85	-0.1536	-0.11

Բորսայում գնանշվող բոլոր ուղենիշային պարտատոմսերի ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի եկամտաբերությունները նվազման միտում են ունեցել: Ամենամեծ աճի միտումն ունեցել են 47 թվականին մարվող ուղենիշային պարտատոմսերի գնանշումները:

Հունիս ամսվա վերջից ֆինանսաների նախարարությունը հարապարակել է ուղենիշային պարտատոմսերի ցանկը հաջորդ եռամսյակի համար: Ուղենիշային պարտատոմսերի ցանկը երրորդ եռամսյակի համար որևէ փոփխություն չի կրել:

Աղյուսակ 6.

Ուղենիշային պետական պարտատոմսերի ցանկը

Ուղենիշային պարտատոմսեր 01.04.18-31.06.18 ժամանակաշրջանի համար	Ուղենիշային պարտատոմսեր 01.07.18-30.09.18 ժամանակաշրջանի համար
AMGN36294202	AMGN36294202
AMGN60294219	AMGN60294219
AMGN60294227	AMGN60294227
AMGB1029A276	AMGB1029A276
AMGB2029A366	AMGB2029A366
AMGB30163472	AMGB30163472

Առաջնային և երկրորդային շուկաներում պետական պարտատոմսերի եկամտաբերությունների փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև եկամտաբերության կորերի վրա: Այդ ամենը դրսևորվել է հիմնականում եկամտաբերության կորերի նվազմամբ:

Գծապատկեր 1.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 29.06.18թ դրությամբ



Գծապատկեր 2.Արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորեր 31.07.18թ դրությամբ



Բոլոր ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերությունները ունեցել են նվազման միտում: Ամենամեծ նվազման միտումը դրսևորվել է առավել երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում, ինչը վկայում է դրանց վրա շուկայական եկամտաբերությունների նվազման առավել մեծ ազդեցության մասին: Պատճառը երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության անկումն է երկրորդային շուկայում և դրանցով կնքված գործարքների առավել մեծ ծավալները:

Գծապատկեր 3. Զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 29.06.18թ դրությամբ



Գծապատկեր 4. Զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կոր 31.07.18թ դրությամբ



Զեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում նույնպես եկամտաբերության կորը նվազել է: Նվազման ազդեցությունը առավել շատ դրսևորվել է առավել երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում:

Գծապատկեր 5. Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկան Հուլիս ամսվա ընթացքում



Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների տատանումների վերլուծությունը ցույց է տալիս դրանց ընդհանուր առմամբ նվազեցման միտումը:

Աղյուսակ 7.

Մինչև մարում եկամտաբերությունների վարիացիաները

	6 ամիս	*1 տարի*	*3 տարի*	*5 տարի*	*10 տարի*	*20 տարի*	*30 տարի*
1 ամիս	0.0001	0.0004	0.0010	0.0027	0.0121	0.0538	0.0715
3 ամիս	0.0008	0.0008	0.0017	0.0033	0.0058	0.0284	0.0398
1 տարի	0.0157	0.0196	0.0698	0.1362	0.2162	0.3736	0.4685
2 տարի	0.4824	0.6389	1.1577	1.3801	1.1776	0.7995	
3 տարի	4.6220	5.5758	7.3742	7.0083	4.9376	3.0648	

Վարիացիայի գործակիցների վերլուծությունը պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների դինամիկայի դիտարկման ժամանակ ցույց է տալիս, որ եկամտաբերության տատանումները առավել մեծ չափով եղել են առավել կարճաժամկետ

պարտատոմսերի դեպքում: Ընդ որում վարիացիայի գործակիցների ամենամեծ արժեքը եղել է 2 տարվա կտրվածքով, ինչը պայմանավորված է 2013 թվականից մինչև 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսական շուկայում եկամտաբերությունների նվազմամբ և 2014թվականի վերջից ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության խստացման պայմաններում եկամտաբերությունների աճով: Ընդ որում ԿԲ գործիքների ազդեցությունը ավելի մեծ է եղել ավելի կարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի եկամտաբերության վրա, ինչը պայմանավորված է կարճաժամկետ միջոցների նկատմամբ շուկայի մասնակիցների կողմից պահանջարկի աճով և երկարաժամկետ հորիզոնում առավել դրական սպասումներով:

2.Կորպորատիվ արժեթղթերի շուկաներ

2018թ Հուլիսի 6-ին ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը ցուցակել է 6 միլիոն ԱՄՆ դոլար անվանական ծավալով արժեկտրոնային պարտատոմսեր ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա կորպորատիվ պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում: Ընկերության՝ SWISB8 հապավմամբ պարտատոմսերի անվանական արժեքը 100 ԱՄՆ դոլար է, իսկ քանակը 60,000 հատ : Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 84 ամիս է՝ արժեկտրոնի 6,50% եկամտաբերությամբ, որի վճարումը իրականացվելու է կիսամյակային պարբերականությամբ: Ամերիաբանկին և Արարատբանկին շնորհվել է ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի՝ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում ցուցակված 6,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսերի (SWISB8) շուկա ստեղծողի կարգավիճակ:

Հուլիսի 23-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ցուցակել է 3 միլիոն ԱՄՆ դոլար անվանական ծավալով արժեկտրոնային պարտատոմսեր ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա կորպորատիվ պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում: Ընկերության՝ ARBKB2I հապավմամբ պարտատոմսերը ներառում են 120,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմս՝ 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով: Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 51 ամիս է՝ արժեկտրոնի 5.25% եկամտաբերությամբ, որի վճարումը իրականացվելու է եռամսյակային պարբերականությամբ: Ֆյուչր Կապիտալ Մարկետին շնորհվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի՝ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում ցուցակված 3,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսերի (ARBKB2I) շուկա ստեղծողի կարգավիճակ:

2018 թ.-ի հուլիսի 13-ին և 23-ին համապատասխանաբար Ամերիաբանակ ՓԲԸ-ի AMRBB7 և AMRBB1 բորսայական հապավմամբ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի առևտուրը Բորսայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում դադարեցվել է՝ դրանց շրջանառության ժամկետը լրանալու հիմքով: Հուլիսի 23-ին նույն հիմքով դադարեցվել է նաև Արարատբանկ ԲԲԸ-ի անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի (ARBKB2C) առևտուրը:

2018թ. Հուլիսի 20-ին «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված դրամային և դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերը (FSCRB1 և FSCRB2) տեղաբաշխվել են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ-ում: Տեղաբաշխված դրամային պարտատոմսերի ժամկետայնությունը 24 ամիս է, քանակը 7 000 հատ, իսկ տեղաբաշխման անվանական ծավալը՝ 70,000,000 ՀՀ դրամ: Աճուրդի ընթացքում կնքվել է 8 գործարք, որի ընթացքում տեղաբաշխվել է 70,060,520 ՀՀ դրամի պարտատոմս: Տեղաբաշխված պարտատոմսերի կտրման գինը կազմել է 10,000 ՀՀ դրամ, կտրման եկամտաբերությունը՝ 10%, միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.9512%: Ընկերությունը տեղաբաշխած դոլարային պարտատոմսերի ժամկետայնությունը նույնպես 24 ամիս է, քանակը 7000 հատ, իսկ տեղաբաշխված անվանական ծավալը 700,000 ԱՄՆ դոլար: Աճուրդի ընթացքում կնքվել է 14 գործարք, որի ընթացքում տեղաբաշխվել է 700,000 ԱՄՆ դոլար պարտատոմս: Տեղաբաշխված պարտատոմսերի կտրման գինը կազմել է 100 ԱՄՆ դոլար, կտրման եկամտաբերությունը՝ 6.9%, միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.9%:

Հիմնական ցուցակում մայիս ամսին եղել են 7 թողարկողի 27 պարտատոմսեր և մեկ հասարակ անվանական բաժնետոմս:

Աղյուսակ 8.
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի հիմնական ցուցակի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Ցուցակ	Դաս	Թողարկող
1	UNIB	A	հասարակ անվանական բաժնետոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2	UNIBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
3	UNIBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
4	AMRBB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
5	AMRBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
6	AMRBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"Ամերիաբանկ" ՓԲԸ
7	AMRBB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
8	AMRBB6	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
9	AMRBB8	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
10	ACBAB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
11	ACBAB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
12	BSTBB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Սևծովյան Առևտրի և զարգացման Բանկ
13	NMCCB2B	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն" ՓԲԸ
14	NMCCB2G	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ
15	NMCCB2H	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ
16	NMCCB2I	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“«Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն” ՓԲԸ

17	ANLBB1	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
18	ANLBB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
19	ANLBB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
20	ANLBB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
21	ANLBB5	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ” ՓԲԸ
22	COVSB2	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
23	COVSB3	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
24	COVSB4	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
26	ARBKB2G	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
26	ARBKB2F	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
27	ARBKB2H	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
28	ARBKB2I	Abond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Երկրորդային ցուցակում ցուցակված արժեթղթերի քանակը 27-ն էր, որոնցից 3-ը բաժնետոմսեր էին, իսկ 24-ը՝ 6 թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր:

Աղյուսակ 9.
ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի երկրորդային ցուցակի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Ցուցակ	Դաս	Թողարկող
1	AHEK	B	Հասարականվանականբաժնետոմս	«ԱՐՑԱԽՀԷԿ» ԲԲԸ
2	ASEV	B	Հասարակ անվանական բաժնետոմս	«Արփա-Սևան» ԲԲԸ
3	HEZB	B	Հասարակ անվանական բաժնետոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ
4	ARBKB2A	Bbond	Անվանականարժեկտրոնայինպարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
5	ARBKB2B	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
6	ARBKB2D	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
7	ARBKB2E	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
8	AMRBB9	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
9	AMRBB2A	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	“Ամերիաբանկ” ՓԲԸ
10	SWISB7	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
11	SWISB2	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
12	SWISB3	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
13	ARBKBD	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
14	GLBLB3	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
15	GLBLB5	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
16	GLBLB6	Bbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ
17	ARBBB1	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
18	ARBBB3	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
19	ARBBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
20	FNCAB1	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ
21	FNCAB2	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

22	UNIBB2	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
23	UNIBB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
24	SWISB4	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
25	SWISB5	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
26	SWISB6	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
27	SWISB8	Bbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Ազատ շուկայի հարթակում գրանցված են եղել 11 թողարկողի 6 բաժնետոմս, և 5 կորպորատիվ պարտատոմս:

Աղյուսակ 10.

ՆԱՍԴԱՔՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայի ազատ շուկայի արժեթղթերը

	Բորսայական հապավում	Շուկա	Դաս	Թողարկող
1	ALMS	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Ալմաստ» ԲԲԸ
2	ARBK	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
3	EJWG	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Երևանիոսկերչականգործարան» ԲԲԸ
4	ESHG	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ԵրևանիՇամպայնգինիներիգործարան» ԲԲԸ
5	EVG1	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Երևանիոսկերչականգործարան – 1 Գնոմոն» ԲԲԸ
6	MQER	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«Մաքուրերկաթիգործարան» ԲԲԸ
7	GLBLB4	Cbond	Անվանական արժեկտրոնային պարտատոմս	««ԳԼՈԲԱԼԿՐԵԴԻՏ»ունիվերսալվարկայինկազմակերպություն» ՓԲԸ
8	ARBBB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	"ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ
9	UNIB	C	Հասարակ անվանական բաժնետոմս	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
10	FMGCB1	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն
11	FMGCB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն
12	HEZBB2	Cbond	անվանական արժեկտրոնային պարտատոմս	«Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ

Կորպորատիվ պարտատոմսերի շուկաներ

Կորպորատիվ պարտատոմսերի շուկայում գործարքներ են կնքվել դրամով և դոլարով գնանշվող պարտատոմսերով: Դրամային գնանշմամբ կորպորատիվ պարտատոմսերի բորսայական հարթակում կնքվել է մոտ 234,902 մլն դրամի գործարք: Ընդ որում դրամային պարտատոմսերով կնքված գործարքների ամբողջ ծավալի մոտ 30,2 % -ը կազմել են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմերով գործարքները: Դոլարային պարտատոմսերի շուկայի ծավալը կազմել է մոտ 1,436 մլն դոլար: Դոլարային գործարքների դեպքում "Ամերիաբանկ" ՓԲԸ–ի AMRBB4 բորսայական հապավմամբ արժեկտրոնային պարտատոմերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 38,9 %-ը:

Աղյուսակ 11.

Կորպորատիվ պարտատոմսերով բորսայական գործարքները 2018 թ Հուլիս ամսին

Թողարկող	Բորսայական հապավում	ՑՈՒՑ	ՎԵՐՋԻՆ	ՄԻՋ	ԱՐԺ	ԱՌԱՎ	ՆՎԱԶ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ	Տեսակարար կշիռը
ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ	BSTBB1	Abond	7.5	7.5	AMD	7.5	7.5	1	1,000	10,235,942	4.4%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB3	Abond	9.4001	9.2874	AMD	9.4001	9	5	399	42,367,166	18.0%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2G	Abond	9	9	AMD	9	9	2	400	4,079,732	1.7%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB2	Abond	7.1429	7.1429	AMD	7.1429	7.1429	2	99	10,241,944	4.4%
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	ACBAB2	Abond	9.2001	8.4865	AMD	9.2001	8.2999	16	700	71,015,812	30.2%
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB7	Bbond	10.25	10.5961	AMD	10.7001	10.25	4	910	47,937,058	20.4%
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	SWISB6	Bbond	10.3001	10.3249	AMD	10.4	10.3001	3	532	28,529,339	12.1%
ՖԻՆՔԱ	FNCAB2	Bbond	8.5715	8.8091	AMD	9.0476	8.5715	2	1,499	15,876,914	6.8%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ	HEZBB2	Cbond	9.9469	10.5462	AMD	11.2999	9.9469	5	450	4,617,977	2.0%
							Ընդամենը.	40	5,989	234,901,884	100.0%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB2	Abond	5.88	5.8312	USD	5.88	5.7702	5	934	96,014	6.7%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB5	Abond	5	4.9079	USD	5	4.7999	6	1,924	194,994	13.6%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2F	Abond	5.5895	5.4508	USD	5.5904	5.3449	3	417	10,499	0.7%

ՅՈՒՆԻԲԱՆԿ	UNIBB4	Abond	5.5	5.5	USD	5.5	5.5	1	10	1,012	0.1%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2I	Abond	5.35	5.35	USD	5.35	5.35	2	72	1,806	0.1%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB4	Abond	4.7699	4.7781	USD	4.7999	4.7699	7	5,490	559,118	38.9%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB2	Abond	4.95	5.1473	USD	5.3194	4.95	6	2,000	203,333	14.2%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB3	Abond	4.6444	4.6444	USD	4.6444	4.6444	2	499	50,723	3.5%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB1	Abond	5.7	5.7	USD	5.7	5.7	1	197	19,908	1.4%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB4	Abond	5.7201	5.7149	USD	5.7201	5.67	2	134	13,457	0.9%
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	ACBAB1	Abond	5.5	5.5	USD	5.5	5.5	1	116	11,866	0.8%
ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	COVSB4	Abond	5.4998	5.4842	USD	5.4998	5.4335	2	255	25,749	1.8%
ԱՅԴԻ ԲԱՆԿ	ANLBB5	Abond	6.1	6.1	USD	6.1	6.1	1	28	2,828	0.2%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2H	Abond	5.55	5.55	USD	5.55	5.55	1	800	20,012	1.4%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2E	Bbond	5.5499	5.55	USD	5.55	5.5499	4	2,246	56,593	3.9%
ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ	GLBLB5	Bbond	6.7401	6.7401	USD	6.7401	6.7401	4	204	20,720	1.4%
ՖԻՆՔԱ	FNCAB1	Bbond	5.4284	5.4284	USD	5.4284	5.4284	2	1,599	41,710	2.9%
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	ARBKB2D	Bbond	5.0202	5.0202	USD	5.0202	5.0202	1	30	773	0.1%
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	AMRBB9	Bbond	4.9001	4.9001	USD	4.9001	4.9001	2	987	99,917	7.0%
Առաջին Հիփոթեքային Ընկերություն ունիվերսալ վարկային կազմակերպություն	FMGCB1	Cbond	6.1033	6.1033	USD	6.1033	6.1033	2	199	5,039	0.4%
							Ընդամենը.	55	18,141	1,436,070	100.0%

Կորպորատիվ պարտատոմսերի բորսայական գործարքների միջին կշռված եկամտաբերությունները նախորդ ամսվա վերջին գործարքների հետ համեմատած նվազել են: Հետագա ժամանակաշրջաններում պարտատոմսերի եկամտաբերությունները կարող են դրսևորել նույն նվազման միտումները՝ կապված ֆինանսական շուկաներում ԿԲ դրամավարկային քաղաքականության մեղմացման, կորպորատիվ պարտատոմսերի ներդրողների ակտիվացման հետ: Դոլարային պարտատոմսերի եկամտաբերության վրա բացասական ազդցություն կարող են ունենալ արտարժույթի շուկայում անորոշությունները և կուրսայն տատանումները:

Ինչպես հունիս ամսին, հուլիսին ևս կորպորատիվ պարտատոմսերով հասցեական գործարքներ կնքվել են: Գործարքները կնքվել են ինչպես դոլարային, այնպես էլ դրամով գնանշվող պարտատոմսերով:

Աղյուսակ 12.

Կորպորատիվ պարտատոմսերով բորսայական հասցեական գործարքները 2018 թ Հուլիս ամսին.

Հապավում	Ցուցակ	ՕՐ	ՄԻՋ	ԱՐԺ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
AMRBB2	Abond	31.07.2018	4	AMD	1	150	15,652,050
COVSB3	Abond	26.07.2018	9.2001	AMD	1	50	5,312,700
COVSB3	Abond	26.07.2018	9	AMD	1	49	5,215,913
ACBAB2	Abond	02.07.2018	8	AMD	1	959	97,726,910
SWISB7	Bbond	11.07.2018	11.1	AMD	1	591	30,420,041
SWISB7	Bbond	10.07.2018	11.0999	AMD	1	591	30,411,117
SWISB7	Bbond	09.07.2018	11.1	AMD	1	591	30,402,187
SWISB7	Bbond	02.07.2018	11.1001	AMD	1	591	30,339,576
HEZBB2	Cbond	19.07.2018	11.29	AMD	1	600	6,094,800
				Ընդամենը.	9	4,172	251,575,293
ARBKB2H	Abond	31.07.2018	5.3499	USD	1	14	349
ARBKB2H	Abond	31.07.2018	5.3499	USD	1	172	4,291
ARBKB2H	Abond	31.07.2018	5.25	USD	1	395	9,888
COVSB2	Abond	27.07.2018	4.95	USD	1	1	102

COVSB2	Abond	26.07.2018	5.0499	USD	1	599	60,978
ANLBB5	Abond	25.07.2018	5.75	USD	1	108	10,975
ARBKB2H	Abond	25.07.2018	5.3499	USD	1	20	499
ARBKB2H	Abond	25.07.2018	5.3499	USD	1	200	4,985
ARBKB2H	Abond	25.07.2018	5.3499	USD	1	1,600	39,882
ARBKB2H	Abond	25.07.2018	5.3499	USD	1	600	14,956
ARBKB2H	Abond	25.07.2018	5.3499	USD	1	800	19,941
ARBKB2H	Abond	23.07.2018	5.3499	USD	1	480	11,961
ARBKB2H	Abond	23.07.2018	5.3499	USD	1	20	498
ARBKB2H	Abond	23.07.2018	5.3499	USD	1	120	2,990
ARBKB2H	Abond	23.07.2018	5.3499	USD	1	20	498
UNIBB3	Abond	19.07.2018	5.6101	USD	1	10	1,009
ANLBB5	Abond	16.07.2018	5.75	USD	1	55	5,582
ANLBB5	Abond	11.07.2018	5.75	USD	1	414	41,981
ANLBB5	Abond	11.07.2018	5.75	USD	1	99	10,039
ARBKB2H	Abond	11.07.2018	5.3499	USD	1	120	3,024
ARBKB2H	Abond	10.07.2018	5.3	USD	1	1,993	50,307
ANLBB5	Abond	06.07.2018	5.75	USD	1	417	42,253
ANLBB5	Abond	06.07.2018	5.75	USD	1	789	79,946
ARBKB2H	Abond	06.07.2018	5.3498	USD	1	45	1,133
ARBKB2H	Abond	04.07.2018	5.35	USD	1	200	5,035
ANLBB5	Abond	03.07.2018	5.75	USD	1	247	25,016
SWISB8	Bbond	30.07.2018	6.5	USD	1	500	50,586
ARBBB1	Bbond	19.07.2018	5.6	USD	1	193	19,972
SWISB8	Bbond	10.07.2018	6.5	USD	1	520	52,427
SWISB8	Bbond	09.07.2018	6.5	USD	1	400	40,321
SWISB8	Bbond	06.07.2018	6.5	USD	1	500	50,375
SWISB8	Bbond	06.07.2018	6.5	USD	1	550	55,413
SWISB4	Bbond	04.07.2018	6.5	USD	1	890	90,391

ARBBB1	Bbond	04.07.2018	5.5	USD	1	286	29,543
ARBBB3	Bbond	02.07.2018	7.755	USD	1	4,000	400,000
				Ընդամենը.	35	17,377	1,237,145

Բաժնետոմսերի շուկաների բորսայական շուկա

Հուլիս ամսին բաժնետոմսերի հարթակում կնքվել է ընդամենը 2 գործարք «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերով: Գործարքի առարկա են հանդիսացել 1203 բաժնետոմսեր, որոնց միջին գինը մեկ բաժնետոմսի համար կազմել է 1072,08 դրամ: Ընդհանուր գործարքի ծավալը 1,290 մլն դրամ է կազմել:

Հուլիս ակտիվ է եղել նաև բաժնետոմսերի հասցեական հարթակը: Այդ գործարքները կնքվել են «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ և «Յունիբանկ» ԲԲԸ-ի հասարակ անվանական բաժնետոմսերով: Գործարքների ընդահնուր ծավալը կազմել է 233 մլն դրամ:

Աղյուսակ 13.

Բաժնետոմսերով հասցեական գործարքները 2018թ հուլիս ամսին

Հապավում	Ցուցակ	Օր	ՄԻՋ	ԱՐԺ	ԳՈՐԾ	ՔԱՆԱԿ	ԾԱՎԱԼ
HEZB	B	31.07.2018	12,000	AMD	1	37	444,000
HEZB	B	30.07.2018	12,000	AMD	1	7	84,000
HEZB	B	30.07.2018	14,600	AMD	1	17	248,200
AHEK	B	27.07.2018	1,000	AMD	1	220,500	220,500,000
HEZB	B	27.07.2018	13,610	AMD	1	176	2,395,360
HEZB	B	03.07.2018	13,616	AMD	1	74	1,007,584
UNIB	C	23.07.2018	230	AMD	1	5,878	1,351,940
UNIB	C	17.07.2018	230	AMD	1	20,869	4,799,870
UNIB	C	11.07.2018	230	AMD	1	9,540	2,194,200
				Ընդամենը.	9	257,098	233,025,154

Շուկա ստեղծողների գնանշումներ

Հուլիս ամսվա վերջի դրությամբ Ֆոնդային բորսայում գործել են կորպորատիվ պարտատոմսերի 8 շուկա ստեղծողներ: Բորսայում ցուցակված թողարկողներից 15-ի արժեթղթերն ունեն շուկա ստեղծողներ: Շուկա ստեղծող ունեցող արժեթղթերի քանակը 64 է:

Աղյուսակ 14.

Բորսայում ցուցակված արժեթղթերի շուկա ստեղծողները

Բորսայի անդամ	Շուկա ստեղծող սկսած	Հապ.	Թողարկող	Ցուցակ/ ազատ շուկա
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	06.07.2018	SWISB8	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	20.06.2018	SWISB7	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	28.12.2017	ARBKB2F	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	20.12.2017	ARBKB2G	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	01.08.2017	SWISB4	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB5	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	06.07.2018	SWISB8	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	26.06.2018	AMRBB2A	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	20.06.2018	SWISB7	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	14.03.2018	ACBAB2	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	13.03.2018	NMCCB2I	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	10.01.2018	AMRBB8	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	25.12.2017	FMGCB1	ԱՀԸ ունիվերսալ վարկային կազմակերպություն	Cbond
	25.12.2017	FMGCB2	ԱՀԸ ունիվերսալ վարկային կազմակերպություն	Cbond
	24.10.2017	ACBAB1	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	Abond
	01.08.2017	SWISB4	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB5	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	01.08.2017	SWISB6	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	14.07.2017	BSTBB1	ՍԱԶԲ	Abond
	12.05.2017	FNCAB2	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
	13.03.2017	FNCAB1	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	Bbond
	08.02.2017	AMRBB3	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	25.01.2017	AMRBB2	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ	03.04.2018	UNIBB4	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	20.03.2018	UNIBB5	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond

	28.02.2018	ARBBB5	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	19.12.2017	ARBBB3	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	18.12.2017	UNIBB3	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	25.09.2017	ANLBB4	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	13.06.2017	ANLBB2	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	12.06.2017	UNIBB2	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	27.04.2017	ANLBB3	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	31.03.2017	ARBBB2	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Cbond
	10.02.2017	ARBBB1	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	25.01.2017	ANLBB1	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	10.02.2016	UNIB	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	A
	26.06.2015	SWISB2	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
	26.06.2015	SWISB3	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«Կապիտալ Ինվեստմընթս» ՓԲԸ	18.01.2018	HEZBB3	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	18.01.2018	HEZBB2	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Cbond
	18.12.2017	COVSB4	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	20.09.2017	COVSB3	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
	26.05.2017	COVSB2	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	Abond
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	18.06.2018	AMRBB9	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Bbond
«ՖՅՈՒՋՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	23.07.2018	ARBKB2I	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	14.07.2017	BSTBB1	ՍԱԶԲ	Abond
«ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ	11.12.2017	GLBLB5	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	11.12.2017	GLBLB6	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	06.12.2016	GLBLB3	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Bbond
	06.12.2016	GLBLB4	«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ	Cbond
	21.11.2016	ARBKB2D	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
	08.07.2016	ARBKB2B	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	03.04.2018	ARBKB2H	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Abond
	22.12.2017	ANLBB5	«Այդի Բանկ» ՓԲԸ (Նախկին «Անելիք Բանկ» ՓԲԸ)	Abond
	30.11.2017	ARBKB2E	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	Bbond

	17.10.2017	AMRBB6	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	31.08.2017	AMRBB5	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	20.04.2017	AMRBB4	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	Abond
	09.12.2016	NMCCB2H	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	24.11.2016	NMCCB2G	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	17.07.2014	NMCCB2B	«Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Abond
	02.04.2010	AHEK	«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ	B

Բաժնետոմսերի թողարկողներից երկուսն ունեն շուկա ստեղծողներ, "Արցախ ՀԷԿ" ԲԲԸ-ն և «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Աղյուսակ 17.

Բաժնետոմսերի շուկա ստեղծողների գնանշումները 31.07.18 դրությամբ.

Բորսայական հապավում	Ցուցակման մակարդակ	Պահանջարկի գին	Առաջարկի գին
UNIB	A	230	240
AHEK	B	1,070	1,120

Աղյուսակ 18.

Կորպորատիվ պարտատոմսերի շուկա ստեղծողների գնանշումները 31.07.18թ դրությամբ

Բորսայական հապավում	ցուցակ	արժույթ	29.06.2018		31.07.2018		փոփոխություն	
			ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ	ՊՀՋ	ԱՌՋ
NMCCB2G	Abond	AMD	7.1989	6.75	7.1966	6.7508	-0.0023	0.0008
NMCCB2H	Abond	AMD	7.197	6.7492	7.2008	6.7483	0.0038	-0.0009
AMRBB2	Abond	AMD	7.6	7.1429	4	3.7593	-3.6	-3.3836
ANLBB3	Abond	AMD	9.25	8.65	9.2001	8.6	-0.0499	-0.05

BSTBB1	Abond	AMD	8	7.6686	7.5	7.1894	-0.5	-0.4792
COVSB3	Abond	AMD	9.84	9.25	9.1	8.51	-0.74	-0.74
ARBKB2G	Abond	AMD	9.4501	9	9.1349	8.6999	-0.3152	-0.3001
NMCCB2I	Abond	AMD	8.2999	7.7934	7.5	7.0423	-0.7999	-0.7511
ACBAB2	Abond	AMD	8.2999	7.7934	8.5	7.9813	0.2001	0.1879
FNCAB2	Bbond	AMD	9.5	9.0476	7.25	6.9047	-2.25	-2.1429
UNIBB2	Bbond	AMD	10.1	9.4501	10.1	9.4501	0	0
SWISB6	Bbond	AMD	10.9719	10.5633	10	9.7999	-0.9719	-0.7634
GLBLB6	Bbond	AMD	9.2889	8.6824	9.199	8.6103	-0.0899	-0.0721
UNIBB5	Bbond	AMD	9.9501	9.3001	9.9501	9.3001	0	0
SWISB7	Bbond	AMD	11.1999	10.7001	10.5	10.25	-0.6999	-0.4501
GLBLB4	Cbond	AMD	9.0703	8.4802	8.9413	8.3696	-0.129	-0.1106
ARBBB2	Cbond	AMD	9.85	9.25	9.85	9.25	0	0
FMGCB2	Cbond	AMD	10.5	9.8591	9.5	8.9201	-1	-0.939
HEZBB2	Cbond	AMD	11.3001	10.6	9.25	8.65	-2.0501	-1.95
AMRBB6	Abond	EUR	3.3	3.18	3.3	3.18	0	0
SWISB5	Bbond	EUR	4.6327	4.432	4.5	4.35	-0.1327	-0.082
ANLBB1	Abond	USD	5.7202	5.3502	5.9301	5.5503	0.2099	0.2001
AMRBB3	Abond	USD	4.83	4.6444	3.8	3.6539	-1.03	-0.9905
AMRBB4	Abond	USD	4.8	4.62	4.9001	4.7201	0.1001	0.1001
COVSB2	Abond	USD	5.3199	5.0299	5.15	4.83	-0.1699	-0.1999
ANLBB2	Abond	USD	5.77	5.4001	5.88	5.5	0.11	0.0999
AMRBB5	Abond	USD	4.7999	4.62	5	4.8199	0.2001	0.1999
ANLBB4	Abond	USD	5.56	5.2001	5.7201	5.35	0.1601	0.1499
ACBAB1	Abond	USD	5.5	5.2999	5.5	5.2999	0	0
COVSB4	Abond	USD	5.44	5.13	5.29	4.95	-0.15	-0.18
UNIBB3	Abond	USD	5.56	5.2	5.67	5.3	0.11	0.1
ANLBB5	Abond	USD	6.0999	5.7201	6.0999	5.7201	0	0
ARBKB2F	Abond	USD	5.6488	5.3471	5.5895	5.294	-0.0593	-0.0531

AMRBB8	Abond	USD	5	4.8079	4	3.8462	-1	-0.9617
UNIBB4	Abond	USD	5.35	5	5.5	5.15	0.15	0.15
ARBKB2H	Abond	USD	5.55	5.2	5.55	5.2001	0	0.0001
ARBKB2I	Abond	USD			5.35	5.0011		
SWISB2	Bbond	USD	4	3.7501	4	3.7501	0	0
SWISB3	Bbond	USD	4.8	4.5	4.8	4.5	0	0
ARBKB2B	Bbond	USD	4.8102	4.5006	4.8102	4.5006	0	0
ARBKB2D	Bbond	USD	5.0202	4.7005	5.0202	4.7005	0	0
GLBLB3	Bbond	USD	6.1501	5.75	6.1501	5.75	0	0
ARBBB1	Bbond	USD	5.6002	5.25	5.67	5.3001	0.0698	0.0501
FNCAB1	Bbond	USD	5.7	5.4284	4.0003	3.8097	-1.6997	-1.6187
SWISB4	Bbond	USD	6.4923	6.1	6.2	6.1	-0.2923	0
ARBKB2E	Bbond	USD	5.55	5.2001	5.5499	5.2	-0.0001	-0.0001
GLBLB5	Bbond	USD	6.7401	6.3	6.7401	6.3	0	0
ARBBB3	Bbond	USD	5.2401	4.9	5.7201	5.35	0.48	0.45
HEZBB3	Bbond	USD	5.65	5.2999	5.4001	5.0499	-0.2499	-0.25
ARBBB5	Bbond	USD	5.7201	5.35	5.77	5.4	0.0499	0.05
AMRBB9	Bbond	USD	5.1401	4.9001	5.08	4.85	-0.0601	-0.0501
AMRBB2A	Bbond	USD	4.9001	4.7117	4.4001	4.2309	-0.5	-0.4808
SWISB8	Bbond	USD			6.5	6.3007		
FMGCB1	Cbond	USD	6.5	6.1033	5.5	5.1643	-1	-0.939

Գնանշումներում եկամտաբերությունների նվազեցումները պայմանավորված չեն եղել թողարկողների ֆինանսական վիճակներով կամ դրանց սպասումներով: Պատճառները հիմնականում պայմանավարված են եղել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետ կապված սպասումներով և պետական պարտատոմսերի շուկայում եկամտաբերությունների նվազման միտումներով:

3.Ռեպո գործարքներ

Արտաբորսայական ռեպո շուկայում պետական պարտատոմսերով կնքված ռեպո գործարքների ծավալը հուլիս ամսին կազմել է **383,3** մլրդ դրամ: Գործարքների մոտ **40**%-ը կազմել են միջբանկային ռեպո գործարքները, որոնք կնքված գործարքների քանակի առումով կազմել են բոլոր գործարքների **13**%-ը:

Միջբանկային ռեպո գործարքների ծավալը կազմել է 154,96 մլրդ դրամ: Գործարքները կնքվել են հիմնականում մինչև 7 օր ժամկետայնությամբ: Միջբանկային ռեպոների միջին կշռված եկամտաբերությունը ամսվա ընթացքում եղել է **6,19**%: Կնքված գործարքների առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները եղել են մոտ համապատասխանաբար՝ 6.50**%** և **2.00** %:

Միջբանկային շուկայից դուրս կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է մոտ **228,4** մլրդ դրամ: Կնքված գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է **6.68**%: Ընդ որում ամենացածր եկամտաբերությամբ այս շուկայում սովորաբար գործարքներ են կնքվում ներդրումային ընկերությունների և բանկերի միջև: Առավելագույն եկամտաբերությունը այս ամսվա ընթացքում կազմել է **10.00**%, սակայն աննշան ծավալի պատճառով էական ազդեցություն չի գործել ընդհանուր շուկայական ծավալների վրա: Նվազագույն եկամտաբերությունը կազմել է 6 %:

Եվրոպարտատոմսերով ռեպոների շուկայում գործարքների ծավալը եղել է մոտ 8,502 մլրդ դրամ, ինչը 20 գործարքի արդյունք է: Միջին կշռված տոկոսադրույքը ամսվա ընթացքում կնքված գործարքների համար եղել է **5,69%:** Գործարքները կնքվել են տարբեր ժամկետներով: Միջբանկային ռեպո շուկայում եվրոբոնդերով գործարքները կազմել են բոլոր գործարքների 87 տոկոսը, ինչը 3 գործարքի արդյունք է:

Բորսայական ռեպո շուկայում գործարքները կնքվել են միայն կորպորատիվ պարտատոմսերով: Դրամային բորսայական ռեպոյի ծավալը կազմել է 157.7 մլն դրամ, կնքված գործարքի եկամտաբերությունը 6.5% է: Դոլարային ռեպոների ծավալը կազմել է 1,404 մլն դոլար: Գործարքները կնքվել են 14-84 օր ժամկետայնությամբ և 2.68 % միջին կշռված եկամտաբերությամբ:

4.Սվոփ գործարքներ

Բորսայական հարթակում հուլիս ամսվա ընթացքում սվոփ գործարքներ չեն կնքվել:

Արտաբորսայում ընդհանուր առմամբ կնքվել են **16.369** մլն դոլարի կամ **7,892 մլրդ** դրամի 39 սվոփ գործարք, ընդ որում միջբանկային գործարքներ կնքվել են ինչպես միջբանկային, այնպես էլ միջբանկային շուկայից դուրս: Միջբանկային շուկայում կնքված գործարքները կազմել են բոլոր սվոփ գործարքների 13%-ը, ինչը ընդամենը մեկ գործարքի արդյունք է:

Միջբանկային շուկայում կնքված գործարքների միջին եկամտաբերությունը կազմել է 6.00**%:** Միջբանկային շուկայից դուրս կնքված գործարքների եկամտաբերությունը միջինում եղել է 3,53%: Առավելագույն և նվազագույն եկամտաբերությունները համապատասխանաբար 9.25% և 3%:

Հուլիս ամսին եվրոյով 3 սվոփ գործարք է կնքվել՝ 4.767 մլն Եվրո ծավալով 5.101 տոկոս միջին կշռված եկամտաբերությամբ: Գործարքները կնքվել են միջբանկային շուկայում:

5.Միջբանկային վարկային շուկա

Միջբանկային վարկային շուկայում հուլիս ամսին կնքվել են 36 վարկայն գործարքներ 3 արժույթներով՝ դրամ, դոլար, եվրո: Դրամային վարկերի ծավալը կազմել է մոտ **34,900** մլրդ դրամ: Գործարքները հիմնականում կնքվել են մինչև 7 օր մարման ժամկետով: Գործարքների եկամտաբերությունը կազմել է **6,08%**:

ԱՄՆ դոլարով ընդհանուր առմամբ կնքվել են 14,950 մլն դոլարի միջբանկային վարկային 9 գործարք, որոնց միջին տոկոսադրույքներըմինչև 7 օր ժամկետայնության դեպքում կազմել է **2,39%**, 1-3 ամիս ժամկետայնության դեպքում՝ 2,14 %**:**

Հուլիս ամսին միջբանկային վարկային շուկայում կնքվել է եվրոյով 7 վարկային գործարք, որոնց ընդհանուր ծավալը կազմել է 13,2 մլն եվրո: Գործարքները կնքվել են 7 օրից մինչև 6 ամիս ժամկետայնությամբ, իսկ միջին կշռված տոկոսադրույքը կազմել է **1.34%:**